

Ե. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԵԶՈՒ ԵՎ ՍՈՍՈՒ ԲՈՒՍԱԿՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կեզու (Betula) և սոսու (Platanus) տեսակները, շնորհիվ իրենց բարձր դեկորատիվության և համեմատական զիմացիոնության մեծ նշանակություն ունեն Երեանի կանաչ շինարարության մեջ, սակայն ի տարբերություն սոսուց, կեզին առաջժմ հազվագյուտ է կիրապում կանաչապատման աշխատանքներում՝ սերմերով գժվար բազմանալու պատճառով: Ինչպես հայտնի է, կեզու սերմերը մանր են և ունեն ցածր ծլունակություն: Այդ պատճառով էլ հաջող ծլման և մատղաշ բույսերի պահպանման համար անհրաժեշտ են հատուկ պարմաններ և խնամք՝ մակերեսային ցանք, հողի և օդի մշտական և բարձր խոնավություն, ստվերացում, թեթև ավագախառն հող և ալյու: Իր բնական տարածման վայրերում, Ռուսաստանի անտառային գոտում, ինչպես նաև Կովկասի և Անդրկովկասի լեռնային անտառներում, կեչին տալիս է սերմային վերած: Համապատասխան ագրոտեխնիկայի դեպքում նշված շրջաններում հնարավոր է կեզու մասսայական բազմացումը սերմերով սովորական դաշտային պայմաններում: Ինչ վերաբերում է անտառազուրկի, թե տափաստանային և թե կիսաանապատային շրջաններին, որտեղ կեչին ներմուծված բույս է, այստեղ մինչեւ հիմա չի հաջողվում բուսակներ աճեցնել բաց գրունտում:

Հայաստանի պարմաններում, անտառային տնտեսությունները մինչև հիմա օգտագործում են անտառներից վերցված բնական վերաճի բուսակները, որոնք նախօրոք դաստիարակում են տնկարաններում: Անբարենպաստ հողակիմայական պայմանները (ծանր կավալին հողերը և խիստ կոնտինենտալ չոր կլիման) հարավային շրջաններում, այդ թվում և ռեսպոբլիկայի անտառազուրկ վայրերում, ստիպում են աճեցնել կեչին սահմանափակ չափով, արհեստական հողային խառնուրդներում, թաղարներում կամ արկներում: Երեվանի Բուսաբանական այգում կեչու բուսակները մինչեւ հիմա էլ աճեցվում են ալդ ձեռքի: Նույնը վերաբերում է և սոսուն, այն տարբերությամբ, որ վերջինը սովորաբար բազմացվում է նաև կտրոններով, բաց գրունտում: Բազմացման գժվարությունը խիստ սահմանափակում է կեչու և մասսամբ սոսու մասսայական ներդրումը կանաչ շինարարության և անտառապատման ասպարեզում:

Կեչու սերմային բազմացման մասին գոյություն ունեն բազմաթիվ տվյալներ, բայց նրանց ստվար մասը վերաբերում է ՍՍՌՄ անտառային, հյուսիսային և միջին գոտու շրջաններին:

Ռուբանովը (1948) Ռուսաստանի անտառապատմանային գոտու պատմաններում հաջող արդյունք է ստացել, կեչու սերմերը ցանելով նոյեմբերի վերջերին, օգտագործելով ծղնոտը ցանքը ստվերացնելու համար: Լեբիժին-

սկին և Սմիբնովը [2] Ալթալի երկրամասում ցանքը կատարել են աշնանալին ցրտերի նախօրյակին, սերմերը ծածկելով ավաղով և ծղնոտով: Սոլոդնիկովը և Լոգինովը [2] Զկալովսկի մարզում նուռնպես կիրառել են ձմեռնամուտ ցանք հոկտեմբերի երկրորդ կեսում: Տյուտիբեռովը [2] Կեմերովսկի մարզի պալմաններում, լավագույն արդյունք ստացել է սերմերը ծածկելով փթած գոմաղթով: Սերմերը ծլել են 12 օր շուտ և սերմարուլսերը տվել են կրկնակի աճ, մեկը բով: Մետրում եղել է 166 բույս: Ֆեղորենկոն [2] կեչու սերմերը ցանել է քառ. մետրում եղել է 166 բույս: Ֆեղորենկոն [2] կեչու սերմերը ցանել է շաղացան, հոկտեմբեր ամսին և ծածկել է ծղնոտով, 8 մմ հաստությամբ: Գարնանը ցանքը փինքցրել է թեթև փոցխերով և նորից ծածկել ծղնոտի ավելի բարակ շերտով: Խասպալովը [2] Օրլովսկի մարզում կեչու շաղացանից ստացել է հեկտարից 4,95 միլիոն բուսակի: Հատ Բերեզինակի տվյալներից (1955) տափաստանալին գոտում կեչու ցանքի ամենալավ ժամկետը աշունն է: Մեզ համար առավելապես հետաքրքիր է, որ Ֆրունզեի Բուսաբանական ալյու պալմաններում, որոնք մոտ են մեր պայմաններին, ծանր լեռնալին պարարտացրած հողերի վրա, աշնանը կատարված ցանքը տվել է հաջող արդյունք: Բուսակների ստվերացման համար միջջարքային տարածություններում ցանքել է ակացիա և ալիք գեպքում պահանջվել է ավելի սակագ ոռում (Ցկաչենկո և Կունչենկո, 1957):

Նպատակ դնելով բացահայտել դաշտալին պալմաններում կեչին և սոսսին սերմերով աճեցնելու հնարավորությունները, մենք ձեռնարկել ենք (1959—1961) համապատասխան փորձեր երեանի Բուսաբանական ալյուտնկարանում: Ուսումնասիրվել են 5 տեսակի կեչի (Betula lutea, B. papyrifera, B. pendula, B. costata, B. Litvinowii) և մեկ տեսակ սոսի (Platanus acerifolia): Սերմերը հավաքվել են օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Բուսաբանական ալյու տերիտորիայից: Փորձնական հողամասը շատ աղքատ է, խճոտ, ծանր, ցեմենտացող, անստրուկտոր կավալին, որը կարելի է դասել կիսանապատալին ջրովի գորշ հողերի տիպին: Ցանքից առաջ հողամասը պարարտացվել է փթած գոմաղթով (5 կգ 1 քառ. մետրի վրա): Ցանքը կատարվել է 5 քառ. մետր տարածություն ունեցող սովորական ցանքամարգերում՝ 3—4 մմ խորության ակոսներում, մեկը մրւածից 20 մմ հոռավորության վրա: Կեչու սերմերը ցանքել են 1959 թ. Նոյեմբերի 26-ին ձևունի տակ, ձևունաշերտը հասնում էր 12—15 մմ:

Սերմերը ակոսներում ցանքելուց հետո ծածկվել են ձևունով, ցանքից հետո ձևունը տափանավել է: Ձևունը հալելուց հետո, մարտի երկրորդ կեսին, սերմերը ծածկվել են պարտեղալին հողախառնուրդի բարակ շերտով (0,5—1 մմ հաստությամբ), ապա փալտաթեփի 2—3 մմ շերտով: Սերմերը մասսալական ծլել են ապրիլի 20—24 (1960 թ.): Քանի որ փալտաթեփի շերտը խանգարում էր կեչու նուռը ծիկիրին, այլպիսին հեռացվեց ակոսներից, թողնելով միայն միջջարքային տարածություններում որպես մուլչ, խոնավությունը պահպանելու համար: Հուլիս և օգոստոս ամիսներին բույսերը պաշտպանվել են արմի կիզիչ ճառագալթներից, ուռենուց գործած խսիրներով: Մինչև որ սերմարուլսերը ունեցել են չորս իսկական տերեն, շրումը կատարվել է ձեռքի ցնցուղներով, օրը երկու անգամ: Հետագալում մինչև վեգետացիայի վերջը սերմարուլսերը ոռոգվել են ջրի թուլլ հոսանքով: Ամեն շրումից հետո մարգերը փինքցրել են հողի քեզ վիճակում:

U. S. JOURNAL

Բույսերի անունը	Ակրծիքի հավաքագումաբանական տարրերի մասնակիլու	Ակրծիքի ցանքի մասնակիլու	Ակրծիքի մասնակիլու ժամկան ժամանակաշրջանի մասնակիլու	Ակրծիքի ծառաբանական ժամկան ժամանակաշրջանի մասնակիլու	Ակրծիքի ծառաբանական ժամկան ժամանակաշրջանի մասնակիլու	Բույսերի բարձրությունը սմ-ով ըստ տարիների	մաքս.	մին.	մաքս.	մին.	Բույսերի անունը և տարիների մասնակիլու
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Betula Litvinowii A. Doluch.	հոկտեմբեր	26.11 59 դ.	20.4. 60 դ.	69.1	770	19.0	10.5	85	77	155	
Betula pendula Roth.	օգոստոս	»	21.4. 60 դ.	56.1	365	27.0	17.0	54	49	147	
Betula papyrifera Marsh.	սեպտեմբեր	»	22.4. 60 դ.	59.4	270	10.0	7.5	63	51	142	
Betula costata Trautw	»	»	22.4 60 դ.	56.3	230	13.0	7.0	51	35	180	
Betula lutea Michx.	»	»	20.4. 60 դ.	39.7	290	18.0	8.5	46	43	116	
Platanus acerifolia Ait.	հոկտեմբեր	»	21.4. 60 դ.	59.5	110	76.0	50.0	122	73	197	

նշված խնամքի շնորհիվ փորձարկվող կեչու 5 տեսակի և թիսկիատերե սուռ ցանքը տպից հաջող արդյունք: Բուսակները ունեին նորմալ աճ, իսկ նրանց խտությունը մեկ ամսական հասակում հաշվում էր 1 հեկտարի հաշվով 1,1—7,7 միլիոն հատ: Պետք է ասել, որ առաջին վեգետացիաի վերջում պահպանվեց բույսերի շուրջ 50 տոկոսը: № 1 աղյուսակում բերված փորձի տվյալները, ինչպես և բոլոր վերը նշվածը, թույլ են տալիս հանգել հետեւյալ եղրակացություններին:

1. Երևանի կիսաանապատի խիստ հողակիմալական պայմաններում հնարավոր է բաց գրունտում կեչու և սոսու սերմերից աճեցնել առողջ բուսակներ, կիրառելով հետեւյալ միջոցառությունները:

ա) Ցանքը կատարել ուշ աշնանը, ձյան վրա, թեթև կավասվազալին փթած գոմաղբով պարարտացված հողում:

բ) Ապահովել հատուկ խնամք (հաճախակի շրել սկզբում ձեռքով, հետագայում հոսանքով, հողը մուլչապատել, մատղաշ բույսերը ամառվա սեղունին սպիրացնել և ալլն):

2. Կեչու փորձարկված 5 տեսակներից ամենից բարձր ծլունակություն է ցուցաբերել, տեղական լիտվինովի կեչին, իսկ ամենացածրը՝ դեղին կիչին (Betula lutea): Առաջին տարում կեչու բուսակները հասնում են 10—27 սմ բարձրության, երկրորդ տարում 51—85 սմ: Ավելի արագ աճող սուռ բուսակները առաջին տարում ունենում են 76, երկրորդ տարում 122 սմ բարձրություն:

3. Ցվլալ փորձի արդյունքները հեռանկար են բացում կեչին և սոսին մասսայաբար բազմացնելու երևանի տնկարաններում, այդ արժեքավոր տեսակները կանաչապատման մեջ ներդնելու նպատակով:

Е. А. ГРИГОРЯН

ВЫРАЩИВАНИЕ БЕРЕЗЫ И ПЛАТАНА ИЗ СЕМЯН В УСЛОВИЯХ ЕРЕВАНА

Р е з ю м е

Приемы выращивания березы из семян не освоены даже в питомниках лесной зоны Армянской ССР, где эта порода довольно успешно воспроизводится семенным путем. В условиях безлесной ереванской полупустыни с ее сухим, жарким климатом и тяжелыми бесструктурными буроземами все мелкосеменные древесные породы и кустарники, в том числе березу и платан, удается выращивать только при посеве их семян в вазоны и ящики с садовой земляной смесью.

В специальных опытах, заложенных осенью 1959 года, автору удалось впервые успешно вырастить пять видов березы и платан кленолистный из семян в условиях питомника Ереванского ботанического сада.

Посев произведен под снег 26 ноября 1959 года. После схода снега семена в мелких бороздках покрывались тонким (0,5—1 см) слоем садовой земляной смеси и древесными опилками (2—3 см). Массовые-

всходы появились к 20 апреля 1960 года, после чего опилки удалялись с посевных рядков и оставлялись в междурядьях в качестве мульчи.

В течение июля-августа сеянцы затенялись щитами из ивовых прутьев. Примерно до месячного возраста полив производился лейками, два раза в день. Впоследствии давался обычный полив напуском, но слабой струей. Результаты посева были успешные. В месячном возрасте насчитывалось на 1 кв. метре от 230 до 770 сеянцев разных видов березы и 110 штук платана. К концу первой вегетации сохранилось до 50% сеянцев. Лучшую всхожесть и густоту всходов имела береза Литвинова и желтая береза (*B. lutea*). Однолетние сеянцы березы достигли 10—27 см высоты, двухлетние—46—85 см, платан соответственно—76 и 122 см.

Результаты этого предварительного опыта свидетельствуют о возможности выращивания сеянцев березы и платана в питомниках орошающей полупустынной зоны при условии соблюдения комплекса мероприятий, вкратце описанного выше.

ЛИТЕРАТУРА

1. Рубанов Б. В. Выращивание березы бородавчатой без отенения щитами. „Лес и степь”, 8, 1950, 34—37.
2. Практики-лесоводы о способах выращивания березы. „Лес и степь”, 6, 1952, 71—73.
3. Березина В. М. Опыт выращивания сеянцев березы бородавчатой без отенения щитами. „Лесное хозяйство”, 9, 1955, 87—88.
4. Меркулов П. М. Опыт разведения карельской березы. „Лесное хозяйство”, 9, 1958.
5. Ткаченко В. И. и Кунченко А. И. К вопросу о выращивании березы в Бот. саду г. Фрунзе. Бюлл. Гл. бот. сада, вып. 27, 1957, 18—20.

